

տեղեկ քառասունյակն ժողովրդի հետ Հայր Նա-
հապետեան գնաց գիւղը եւ քննելով գործը,
պարզեց, որ մեղաւորը քառասուն է եւ զիւ-
ղացիներն իրաւունք ունեն ըողորկելու շահա-
մոլ քառասունի դէմ Մի եւ նոյն ժամանակ
հայր Նահապետեան հրամայեց քառասունյակն յետ
առնել «բանադրանքը», թողնել զիւղացուն եւ
իր ազգականներին յաճախել եկեղեցի եւ կա-
տարել հոգեւոր պիտոյնները, բայց այդ ար-
դար վճիռը կրկին չընդունեց տղէտ քառասուն
եւ չը հաշտվեց իր ծուխի հետ: Գործը նորից
գնաց Սարատովի թեմակալ եպիսկոպոսին:

Թէ ինչ վճիռ կը տայ եպիսկոպոսը—այդ
կը տեսնենք մօտիկ ապագայում, բայց մի
բան ճշմարիտ է, որ տղէտ քառասունները կա-
տարեալ պատուհաս են մեր համայնքի համար:
Այնքան աղէտ, այնքան շահամոլ լինել, որ
փողի համար բանադրել, զրկել մի քանի
հոգի եկեղեցուց եւ հոգեւոր միջնորդութիւն-
նից—այդ աւելի քան հրէշաւոր է: Պէտք է
հասկանան մեր պատեւի քառասունները, որ ե-
կեղեցին իրանց սեփական տունը չէ, եկեղե-
ցին համայնքի, ժողովրդի սեփականութիւնն է,
աւելի լաւ ասած՝ Աստուծոյ տունն է. ո՞վ ի-
րաւունք ունի ժողովրդին զրկել եկեղեցի յա-
ճախելուց, կամ, վերջապէս, ենթադրենք թէ
մի մարդ մեղաւոր է, նա արժանի չէ եկեղե-
ցի մտնելու, բայց ինչ մեղք ունեն նրա հայրը,
մայրը, քոյրը, հարսը եւ ուրիշները: Բայց մեր
պատեւի շնորհ էլ է արգելում... Ինչ իրա-
ւունքով—յայտնի չէ:

Հապա երբ ասում են, թէ «մենք Քրիստոսի
աշակերտներ ենք, Տիրոջ խօսքը տարածողներ
ենք, եկեղեցու սպասաւորներ ենք, հովիւներ
ենք», սուտ չէ: Որտեղ է գրված, որ քրիստո-
նեային կարելի է փողի համար եկեղեցուց ար-
գելել: Թէ չէ այդպէս է թոյլատրում մեր կրօ-
նը Այո, ոչ եկեղեցին եւ ոչ էլ եպիսկոպոսի
հովիւական կոնգրէլը կարող են կարգի եւ պատ-
շաճի մէջ պահել մեր անկրթ եւ անբարոյա-
կան քառասուններին: Նրանք ուրիշ բան չեն,
եթէ ոչ «գաւառազգեստ դայիք», որ ալ ու ձախ
կեղեցում, գիշատում են ժողովրդին եւ իրանց
հրէշային նպատակին հասնելու համար չեն խը-
նայում նոյն իսկ արդար մարդկանց մեղաւոր
յայտարարել եւ իզուր տեղը պատկը:

Այսպիսի ազան եւ շահախնդիր քառասունների
համար ամենալաւ պատիժ կը լինի մի քանի
տարի զրկել նրանց քառասունագործութիւնից:
Երանի թէ Արապիայի հոգեւոր կառավարու-
թիւնը կարողանար իր իրաւասութեան տակ
գտնվածներին կարգի ու պատշաճի մէջ պահել:
Լաւ է մի մարդ կորչի, քան թէ մի ամբողջ
գիւղի ժողովուրդը: Շիրակեցի

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մայիսի 22-ին

Մայիսի 21-ին, Ներսիսեան դպրոցի նախկին
ուսումնաւարտ աշակերտները, որոնք այժմ
գտնվում են Բագուում եւ Բալթիսկում, ի-
րանց ընկերակիցների մասնակցութեամբ, թուով
30 հոգի, Բագուի ս. Աստուածածնի եկեղե-
ցում կատարել տուին Ներսէս Վ-ի հոգեհան-
գիւորը: Հոգեհանգիւորին դպրոցի ուսումնաւարտ
Ղաճնան վարդապետը համառօտ քարոզ խօսեց
թէ Ներսէս Վ-ի գործերի եւ թէ նրա հիմնադ-
րած դպրոցի 75 երկար տարիներում հայ ժո-
ղովրդին տուած օգուտների մասին:

Երեկոյեան ժամի 9-ին «Մետրոպոլ» հիւրա-
նոցում տեղի ունեցաւ ընկերական ճաշ, առան-

ձին վճարով: Ծաղկերային մասնակցում էր
նաեւ 52 թւականին Ներսիսեան դպրոցում իր
ուսումը աւարտած եւ գրականութեան մէջ էլ
իր գրումներով յայտնի բժ. Բաղդասարեան:
Նա սկսեց պատմել դպրոցի կեանքից: Այդ հե-
տաքերական պատմութեամբ տեւեց մինչեւ
ժամի 11¹/₂-ը, որից յետոյ հաւաքվածները ի-
րանց չորհրդակցութիւնը յայտնելով, ուսում-
նաւարտութեան տարիքի կարգով, նստեցին
ընդարձակ դահլիճի երկարութեամբ բացված
համեստ ընթերցի սեղանի շուրջը: Ընթերցեց
մերթ ընդ մերթ ընդհատվում էր հիւրերի Ներ-
սիսեան դպրոցի նշանակութեան, նրա ուղղու-
թեան եւ հայ ազգին տուած նրա մեծ օգուտ-
ների վերաբերութեամբ խօսված ասենաբա-
նութիւններով:

Առաջարկվեց, ի միջի այլոց, նաեւ նուիրա-
բերութեամբ մի ֆոնդ կազմակերպել, որից
պաշտօն ճարելու համար Բագու եկող Ներ-
սիսեան դպրոցի ուսումնաւարտ աշակերտները
կարող կը լինեն մի համեստ նպաստ ստանալ
եւ կառավարվել, մինչեւ իրանց համար յար-
մար պաշտօն ճարելու: Այս մասին հանդիսա-
կանները վճռեցին ժողովապէս ապագայում առանձին
ժողով կայացնել եւ մանրամասն ծրագիր մշա-
կել: Ընթերցել վերջում կարգաչկեց եւ 30 սա-
ների կողմից Ներսիսեան դպրոցի հոգաբար-
ձութեան ուղարկած հետադրի պատուէնք: Ընթե-
րեց տեւեց մինչեւ գիշերվում 2 ժամը:

Նամակ վերջացնելով չեմ կարող ընթեր-
ցող, լուծեան տալ Բագուի մէջ գտնվող մեր
մի քանի ետաւեր եւ իրանց վրա մեծ կարծիք
ունեցող այն պարոններին, որոնք հէնց այս
համեստ տոնավաճառութեան գործի մէջ էլ բա-
ցի երեկոյեան ծաղկերային չը մասնակցեցուց,
ընկերական հրաւերին անտեղեկ եւ խուլ ձե-
ւանալով, չեկան նոյն իսկ հոգեհանգիւորին ի-
րանց բարեբարի յիշատակը յարգելու համար:
Գ. Խ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Մայիսի 22-ին

Շուշին, քաղաքային ինքնավարութիւնն ասա-
նալուց յետոյ, գրեթէ աչքի ընկնող ոչ մի ա-
ռաջագիտութիւն ցոյց չէ տուել: Էլի նոյն կեղ-
տառ, ցեխոտ, խաւար փողոցները, էլի չը կան
ժողովուրդը ազնուացնող եւ կրթող հասարա-
կական հիմնարկութիւններ: Զայնաւորները ո-
չնչով չեն հետաքրքրվում, նրանց անտարբե-
րութեան պատճառով քաղաքային վարչութեան
գործերը անմիջապէս վիճակի մէջ են: Սակայն
ձայնաւորները միշտ իրանց կանանց, բարե-
կամքների մօտ գտնվածով են: Թէ ժողովու-
րում ահալին հարցեր են վճռում, հազիւ թէ
կարողանում են ժամը 1—2-ին գնալ տուն:
այնքան խօսում են, այնքան մտածում են, որ
գլուխները սկսում է ցաւել: Մեր քաղա-
քի հայրերը ամբողջ օրը նստած են լինում
«Թօփխանէի» քարերի վրա, աչքով տես-
նում են թէ ինչպէս, օրինակ, կուրբի չի-
նութիւնը հեղձնուէ ատաղ թէ քաղվում եւ քա-
ղաքին պատկանող հողն իւրացնում: տեսնում
են եւ լուծւում: քաղաքագլուխն էլ, ինչ խօսք,
այդ լուծ ու մուշ զիտողների կարգումն է:
Ինչպէս կարող են ձայնաւորները մի քանի
անկ քաղաքի շահերը յափշտակողների դէմ
պաշտպանելու համար, երբ նրանցից ամեն
մէկը ունի իր սեփական «մեղքը» իր սեփա-
կան ցաւը:

Այսպէս, քաղաքային վարչութիւնը ստիպել

է յայտնի փողոցների վրա տուն ունեցողնե-
րին, որ աների ատաղ մայիսի չինեն, եղած
բարձր մայիսը քաղաքին: Աղքատները ամեն
նայն հնազանդութեամբ կատարել են իրանց
պարտականութիւնները, իսկ հարուստները՝ ոչ
Նրանք գիտեն, որ օրէնքը աղքատների համար
է ստեղծված, իսկ հարուստների, իրաւասու-
ների համար ոչ: Սրանք գիտաւքը ընկնող «ա-
ցառութիւններ» են. սակայն քաղաքի չըջա-
կայքում քաղաքին պատկանող որքան հողեր
են իւրացնում, այդ միայն Աստուած գիտէ...
Բայց ձայնաւորների համար ներկայումս աւե-
լի կարեւոր գործ կայ. նրանք կուրբի անդամ-
ներ են եւ ուղում են ունենալ ամառային
կուր: Բաւական ժամանակ է, որ այդ հար-
ցովն են զբաղված: Մինչեւ անգամ բաժանվել
են երկու կուսակցութեան, մի կուսակցութիւ-
նը պահանջում է, որ ամառային կուր ունե-
նան, իսկ միւսը չէ ուղում: Երկու խօսիւնը,
վիճելուց յետոյ, երէկ ընդհանուր ժողովում մի
ձայնի առաւելութեամբ վճռեցին, որ 4000
բուրլով ամառային կուր չինեն: Այժմ էլ հարց
է բարձրացել, թէ որտեղ պիտի յիմեն Զա-
հլիները ցանկանում են քաղաքային բուրլա-
րում ամենալաւ տեղ եւ շատ էժան գնով, տա-
րեկան 200 ռ. վարձով: 10 տարի անցնելուց
յետոյ կարող են մինչեւ անգամ չինութիւնը
քանգել եւ ամենի իսկ հասակաւոր մարդիկ
հակառակ են. նրանք չեն ուղում, որ մի հա-
տիկ քաղաքային բուրլալը տեղացիներն, փոք-
րացիներ, թէ ինչ է այդտեղ կուր պիտի չի-
նեն, փոխանակ երեխաների խաղալու տեղ չի-
նելու, ծառեր անկուլու, ծաղկանոցներ չինելու,
խնամելու, որ եղած ծառերը չը փչացնեն:
Սակայն ո՞վ պիտի մտածէ քաղաքի մասին,
ձայնաւորները, իրենց կուրբի անդամներ, հար-
ցը պիտի վճեն, ի հարկէ, յօգուտ կուրբի եւ
ոչ թէ յօգուտ քաղաքի:

Մի չարաթ ատաղ Եւլախի խճուղու Բարդա
կայարանի մօտ աւազակները մի ռուս վարժու-
հի կողոպտելուց յետոյ, յարձակվում են դէպի
Եւլախ գնացող մասնակցութեան հանրակառքի վրա
եւ ճանապարհորդներից պահանջում են փող:
Ճանապարհորդները տալիս են փողը, բայց ա-
ւազակները չեն բաւականանում, սկսում են
խուզարկել ճանապարհորդների թւում լինում
է եւ Միքայէլ Գոչարեանը: Երբ աւազակնե-
րից մէկը հրացանը դէպի նրան ուղղած պա-
հանջում է ժամացոյցը, նա հանում է ռէվոլ-
վերը եւ արձակում է դէպի աւազակը ու վիրա-
ւորում նրան: Աւազակները չիթթվում են,
իսկ ճանապարհորդները քշել են տալիս հառ-
քը, ազատ են անվաճա հասնում եւ Եւլախ:
Միւս օրը ոստիկանները արեւել հեռքը բռնե-
լով գտնում են վիրաւորված աւազակին եւ
նրա երեք ընկերներին, իսկոյն եւ կէ կալա-
նաւորում են: R.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 26 մայիսի

Խնդրում եմ չը մերժէք «Մշակի» ատաղիկայ
համարներից մէկում տպագրել նամակս հետ
ուղարկված նուիրատուութիւնների յուշակը յօ-
գուտ Թիֆլիսի ժողովրդական տան չինու-
թեանը: Նուիրատուութիւնները ստացված են
Լ. Նա. Միքայէլի եւ Ն. Ա. Խուզարովի
միջոցով:

1) Ն. Ա. Խուզարովի —200 ռ. 2) Գ. Ս.
Տէր-Ստեփանեան—200 ռ. 3) Գ. Ի. Միրզո-
բեկ—300 ռ. 4) Մ. Ի. Միրզոբեկ—300 ռ.
5) Իշխ. Ն. Վ. Արդուլեան—300 ռ. 6) Ա. Ի.

մական զիբքին:

Դեռ տասներկու տարեկան էի, երբ մի օր
պատահմամբ մի թերթում կարգացի մի յօ-
գուած ուսանողների վերաբերմամբ, յօդուածա-
գիրը պարսաւում էր հայ ուսանողին, որ հա-
մալարանի նստարանի վրա իղէպիտ է, իսկ
վերադառնալով երկիր կարիւրիտ է դառնում
եւ այլն եւ այլն: Իմ մանկական գլխում մի
միտք ծագեց: Միթէ այդ ուսանողները չեն
հասկանում, որ իրանց արածը վատ է: Եւ չը
նայած իմ ջանքերին եւ անգոր եղալ պատաս-
խանելու: Դրանից յետոյ գուցէ նոյնանման հա-
րիւրաւոր յօդուածներ եմ կարդացել, բոլորը
նոյնն են կրկնում, բարոյական խրատներ են
տալիս, յօդուածում են ուսանողներին յետ կե-
նալ իրանց բռնած ճանապարհից եւ այլն եւ
այլն:

Եւ այդ բոլորը, ինչպէս ամեն մի բարոյական
քարոզ, մնում է «ճանք բարեւոյ յանապատի»:
Այժմ Բագուում գուցէ հազարից աւելի զա-
նազան բարձրագոյն դպրոցներից աւարտած
երիտասարդներ կան, դուցէ հէնց բոլորն էլ
համալսարանում եղած ժամանակը փայլուն
յոյսեր են տուել. այժմ փաստն այն է, որ այդ

Մանթաշեան—500 ռ. 7) Մ. Օ. Արամեան—
200 ռ. 8) Ա. Բ. Ղուկասեան—200 ռ. 9) Ա.
ուսարական տուն Ի. Ե. Փիթիւսեաների—200
ռ. 10) Խ. Գ. Թումանյան—200 ռ. 11) Ի. Ի.
Մովսիսեան—250 ռ. 12) Ն. Ն.—4000 ռ. 13)
Զ. Վ. Շուրյան—25 ռ. 14) Ն. Ն. Վեկտորով-
բով 25 ռ. 15) Գ. Մ. Արաֆեան—200 ռ.
16) Ս. Գ. Զուբայով—200 ռ. 17) Կ. Եւ. Զու-
բայով—300 ռ. 18) Գ. Յ. Ալեկեան—100 ռ.
19) Գ. Օ. Թումանյան—250 ռ. 20) Ա. Մա-
տուրեան—200 ռ.: Ընդամենը 8,150 ռ.:

Ն. Ա. Խուզարով

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ստեփան, մայիսի 18-ին

«Մշակի» 88-րդ համարում Ստեփանից պ. Ար.
Ամիրխանեանց գրում է. «Եւս խնդրում եմ
թղթակցից աշխարհ հանել գործակալ Արշակ
քառասունի կամ ուրիշների հաշիւը, որոնք մինչ-
չեւ այսօր ոչինչ չեն ցոյց տուել»: Թղթակցի
խօսքերը լոկ զրպարտութիւն են իմ դէմ: Ո-
րովհետեւ, երբ Թիֆլիսի առաջնորդ Մամբէ
կախարպոս ժամանեց Ստեփան 1889 թ-ին, նրա
առաջին գործը եղաւ դանձապահ հոգաբար-
ձուից հաշիւ պահանջելը: Եւ որովհետեւ եւ
էի վարում այդ պաշտօնը ուստի ներկայացրի
հաշիւս, կոնսիստորիայից հոգաբարձութեան ա-
նունով տուած ժապաւինեալ մատենաւում ար-
ձանագրած՝ իր բոլոր մանրամասն դոկումէնտ-
ներով: Ներկայ էին առաջնորդին ուղեկող
քառասուն, իմ պաշտօնակից կրկու հոգաբար-
ձուները եւ ներկայ քաղաքագլխի օգնական պ.
Վ. Ենիկօրիեանց: Առաջնորդը, մանրակրկի
քննութիւնից յետոյ՝ ընդունեց հաշիւս եւ
վերջիցի իր հետ:

Գործակալ Ստեփան
Արշակ քառասունայ Տէր-Ստեփանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի, մայիսի 25-ին, Թագուհի Կայս-
րուհի Ալեքսանդրա Յիզօրովնայի ծննդեան
տօնի մատակարար Պետրոս Ալեքսանդրով-Նեվո-
կի տաճարում գոհացողական մաղթանք կա-
տարվեց, որին ներկայ էին բազմաթիւ զինու-
թական եւ քաղաքացիական աստիճանաւորներ:
Նոյնպիսի մաղթանքներ կատարվեցին հայոց
Վանքի մայր-տաճարում, կաթօլիկների, գեր-
մանայիների եկեղեցիներում, հրէաների սի-
նագոգայում եւ մասնաւորապէս մզկիթում:
Գաղաքը ստաւօտեան զարգարված էր դրօշակ-
ներով, իսկ երկրորդան տեղի ունեցաւ հրա-
վառութիւն:

Կովկասի կառավարչապետի օգնական զե-
ներալ-լէյտենանտ Յիզգէ ինժեներ Նօյմալ-
կի հետ միասին ճանապարհ ընկաւ Թիֆլիսից
դէպի Հիւսիսային Կովկաս: Կառավարչապետի
օգնականը մտադիր է այցելել Ղզլար քա-
ղաքը եւ բոլոր այն տեղերը, որոնք զգալի
շեւաներ կրեցին հեղեղից՝ անցկանքներում տե-
ղի ունեցած անձրեւների ժամանակ:

Կործ ժամանակից յետոյ որոշված է հրաւի-
րել մի խորհրդակցութիւն հաղորդակցութեան
ճանապարհների եւ ֆինանսների միջնորդու-
թեան, նոյնպէս եւ Կայսրուհի Մարիայի հիմ-
նարկութիւնների ներկայացուցիչներից, որոնք
պէտք է վերջնականապէս վճեն առանձին
բարեկործանական տուրք սահմանելու հարցը այն
անձերից, որոնք երկրորդով ճանապարհ են
գցում կամ դիմաւորում են իրանց ծանօթնե-
րին եւ ազգականներին: Առանց այդ տուրքի
ոչ ոք իրաւունք չի ունենայ դուրս գալ կա-

յոյսերը խաբուսիկ են եղել, որ ուսանողը Բագ-
ուում իր մասնագիտութեամբ չէ պարագլուխ
որ նա կարիւրիտ է, որ նա հասարակական
գործով չէ հետաքրքրվում, մինչեւ անգամ նը-
րանց մէջ գոգութեամբ պարագլուխներ էլ կան
եւ այլն:

Մի հարց.—միթէ յիշեալ ուսանողները բոլո-
րն էլ ստոր եւ անազնիւ մարդիկ են, որոնք
համալսարանում ուրիշ գոյն են ցոյց տուել, իսկ
այստեղ ուրիշ: «Այո»—չառ հասկանալի է
իսկ «ոչ»—հակահասկանալի:

Ուրեմն թողնենք զանազան հիպոտեզները
թողնենք մի կողմը իղէպական մտքերը եւ
բարոյական քարոզները, աշխատենք քննել մեր
կեանքը, տեղական պայմանները եւ բոլոր այն
պատճառներն ու հարուածները, որոնք առա-
ջացնում են յիշեալ չարիքները:

Միայն հիւսնելութեան պատճառներն իմա-
նալուց յետոյ, կարելի է մտածել բժշկութեան
մասին:

Գ. Բ.

Բագու:

յարանի դահլիճները դեպի պլանտացիոն երկաթուղու գնացքի մեկնելու կամ դադարեցնելու համար Տուրքիայի վարչակազմը և յոգուտ Կապուտուկի Մարիայի հիմնարկությունները:

Ստացանք թիֆլիսի Հրատարակչական ընկերության լույս ընծայած «Սիֆիրիս» գիրքը, որ կազմել է թիֆլիսի Արծրունի Գիրքեր ընկերության 171 փոքրագույն երեսներից եւ արժեքը 25 կոպեկ:

ՎԱՍԻԿԱՎԱԶԻՑ մեզ գրում են. «Մայիսի 21-ին տեղիս երկրապաշտպանության տեսչից Ներսիսյանի գրությունից 75-ամեայ յոթնամյա մի փառաւոր հանդէսով, որի նմանը չէ եղել այստեղի Առաւօտեան պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստ դարձող հիմնադրի համար, իսկ հանդէսը, ուսումնարանի դահլիճի փոքրութեամբ պատճառով, կատարվեց երկուցուկ քաղաքի ձեռնարկի կողմէ, որտեղ հրաւիրված էր համարեա քաղաքի ամբողջ հայ հասարակութիւնը: Հանդէսի ծրագիրը բաւական բազմակողմանի էր եւ բազմալայն էր եւրոպական եւ հայկական մասերի: Երգում էր մեր խմբագրական պատարագից հետոյ տեղի ունեցան խումբը: Հանդէսն սկսվեց «Հայր մերով», կարգադրեց Ներսիս Մ-ի համաձայն կենսագրութիւնը, որի մէջ պարզված էր եւ Ներսիսյանի գրությունից: Յետոյ պարբերաբար կարգադրվում էին ուսումնարանի հայերէն եւ ռուսերէն լեզուներով եւ երգվում էին ժողովրդական եւ ազգային երգեր: Երգերից հասարակութեան ուշադրութիւնը առանձնապէս գրաւեցին «Արաբազ-Էջմիածինը», «Ջանգիւլումը», «Նուաւաթը» եւ «Բաւերտոտանը», որոնք արժանապատիւ բուն ծափահարութիւնների եւ կրկնվեցին: Հանդէսից յետոյ տեղի ունեցան հայկական պարեր: Հասարակութեան մեծամասնութիւնը շատ հետաքրքրութեամբ էր վերաբերվում դէպի հայկական պարերը, որովհետեւ առաջին անգամն էր տեսնում ժամի 11-ին վերջնապէս հանդէսը եւ հասարակութիւնը գոհ հեռացան»:

ՎԱՍԻԿԱՎԱԶԻՑ մեզ գրում են. «Վաղարշապատի Ե. Աստուածածին եկեղեցու քահանայներից մէկը, որն առաջ վարում էր գործակալի պաշտոն եւ նշանակված էր տեղիս երկուսուկ դարձողների կրօնական, դէպի մի խնդրեց զաղծականի ընտանիքն ունեցած իր մի անվաճիվ վարձուքի համար՝ Վեհափառ Կաթողիկոսի կարգադրութեամբ (առանձին քննութիւն նշանակելուց յետոյ) դատաւարութեամբ է երկուս ամսվայ ապաշխարութեան խոր-վիրապի վանքում Որբան յիշում ենք, սա առաջին դէպքը պէտք է լինի, երբ Վեհափառը առանձին կոնդակով պատժում է մեղաւոր հոգեւորականին: Սակայն չը նայած Վեհափառի կարգադրութեան եւ կոնսիստորիայի հրամանին, յիշեալ քահանան ոչ թէ միայն տեղից չէ չարժեքում, այլ եւ վեհաբանական ազաների միջնորդութեամբ աշխատում է նոր քննիչ նշանակել տալ իր գործը քննելու, երեւի համոզված լինելով, որ նորի վեհաբանական ազաների միջնորդ կաղծվի նշանակելով այնպիսի քննիչ, որը կը խղճայ իր վրա եւ կազատէ նրան պատժից: Իսկ թէ ո՞ր կը մնայ արդարութիւնը, ինչ կը լինեն վեհափառի կոնդակը եւ կոնսիստորիայի որոշումը—այդ բոլորը ոչինչ, որովհետեւ աղաների ցանկութիւնն է միայն ամեն միջոց գործը դնել եւ աշխատել արդարացնելու արդէն մեղաւոր ճանաչված քահանային»:

ԳԵՏԱԲԵԿԻՑ մեզ գրում են. «Մայիսի 17-ի գիշերը այստեղի պղծահամբի մասնաւոր դրասինականներից անպայման չարագործներ գողցանք եւ մօտ հինգ հազար բուրլու արժողութեան խաղարկութեան տոմսեր: Զարմանալիս այն է, որ ոչ գրասենական, ոչ էլ կասայի դուռը կտրված չէ եւ բանալիով է բացված: Ենթադրում են, թէ դա տանու գողի գործն է»:

ԱՇՏԱՐԱԿ գիւղից մեզ գրում են. «Մեր ժողովրդի խեղճ եւ աղքատ դասակարգին վիճակված չէ գոնէ մի տարի ազատ շունչ քաշելու, գոնէ մի տարի անխեղճ վախառուների եւ հարստահարիչների գերի չը դառնալու: Այս տարի մեծ յոյս ունէր մեր ժողովուրդը, որ գոնէ մի փոքր ազատ օր կը տեսնէր: Եղանակները անձրեւային էին անցնում, առատ էին թէ այգիների եւ թէ արտերի բերքերը: Մի անգամից երկու տեղից փրկութեան յոյս էր սպասում: Բայց աւաղ, երկար չը տեսնեց այդ ուրախութիւնը: Մայիսի 12-ին կարելու էր ոչնչացրել, գետին հետ հաւասարաբար: Գիւղացու ձեռքի աշխատանքը: Կարկուտը տե-

ւեց տասը րօպէ: Լուռ եմք, որ կարկուտը բաւական վնաս է տուել եւ Եղեարդի արտերին: Գիւղացու միւս ցան էլ գիւղում տարածված հիւանդութիւնն է, օրհնակ, տիֆ, ծագիլ եւ այլն: Համարեա 1892 թականի խօշորայի տարած գոհերի թիւի չափ տարաւ եւ տիֆը, եւ դեռ եւս տանում է: Զատիկից մինչեւ այսօր մեռել են միմիայն տիֆով 7 հոգի: Ծագիլը դոհեր չունի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱՆԱՆԻՑ

Սալմաստ, մայիսի 6-ին
Ներկայումս Սալմաստում ընդհանուրի միտքը զբաղեցնողը եւ խօսակցութեան առարկան քրդերի պարբերական յարձակումներն են գիւղերի վրա: Հաղթակի պարսկական սահմանադիրութեան դրած Զաֆար աղան եւ Սոմայի մամաղիների գլխավոր Մամադ Շարիֆ աղան կարծէք վճռել են այս անբաղդ դաւաճի առանց այն էլ սեւաջած օրերը աւելի սեւացնել ու խեղճ գիւղացիներին ամենակարեւոր կենսական պիտոյքներից—կաթն ու ժածնից կարօտ թողնել: Ընդհանուր երկիւղը այնքան սաստիկ է, որ տաւար ու ոչխար մինչեւ այժմ գիւղերից դուրս չեն եկել թողնելով ճոխ արօտատեղիները կուսական զրուծեան մէջ: Սահմանի եւ լեռների մօտ գիւղերի անտեսական գործերը զգալի կերպով կաղում են: Լեռները եւ ձորերը 1/2 արջնալիքի ծաղիկներով ու խոտերով են ծածկված, սակայն խեղճ գիւղացիները առաւար դատաւարութեամբ է քաղել: Շատ արգասաւոր հողեր ունեցող դէմքեր մնացել են առանց ցանկուի, որովհետեւ գիւղացին նրա տուած պտուղի տէրը չէ: Երրորդ տարին է, ինչ այդ զրուծիւնը մի կողմից եւ երաշտը միւս կողմից ընդհանուր պատճառներ են, որ Սալմաստում հայի մեծ պակասութիւն է զգացվում: ցորենի բերք (9 պուղ) այժմ բարձրացել է 9—10 թուամասի:

Գարունը, ամառը եւ աշունը խաղաղ ժողովրդի համար վար ու ցանքի եւ արդիւնաբերութեան եղանակներ են, իսկ քրդի համար—լուրջ թալանի եւ ասպատակութեան սեղօն: Այս մի ամսվայ ընթացքում քրդերը քեջեցին օրը ցերեկով՝ Զէվաշի գիւղի ամբողջ հօտը, մօտ 700 ոչխար, Բեալայան գիւղից 50—60 ոչխար, որից մի մասը աջողկեց կուռով յետ խել, Մահլամ եւ Սաւան գիւղերից տարան 2 գոմէշ, մի քանի հատ եղ ու 10 հատ ոչխար, ծակելով գոմերի պտերը: Ռեւալ գիւղի վրա յարձակվեցին թալանի նպատակով գիւղացիների հետ կուռ բռնկելով երկու մարդ սպանելին եւ մի քանիսին էլ վիրատուրեցին: Զանազան գիւղերից տաւար, ոչխար տանելը 5-ով, 10-ով համարեա օր չէ անցնում, որ տեղի չունենայ: Պարսից կառավարութիւնը կարծէք քնած է եւ բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում աւազակութիւնների վրա: Այլապէս էլ չէ կարող լինել: Օգտվելով կառավարութեան այդ թրուծութիւնից, քուրդ արդաները այնքան համարձակութիւն են ստացել, որ մինչեւ անգամ յարձակվեցին Դիլիմանի դատաւոր՝ Նալբերի-հօքիմաթի վրա:

Սոմայի Մամադ Շարիֆ աղայի մարդկանցից մի քանի հոգի բանտարկված էին Դիլիմանի բանտում: Մի քանի անգամ դատաւորը նախակ է ստանում քուրդ աղայից, որպէս զի արձակէ նրա մարդկանց, բայց ուշադրութիւն չէ դարձնում: Անցեալ օրը՝ ապրիլի 26-ին, լուսաբացին Մամադ Շարիֆ աղան 50 ձիււորներով յարձակվեց դատաւորի բնակարանի վրա: դատաւորը երկիւղից թափվում է. քուրդ աղան իր մարդկանցով ներս է խուժում նրա բնակարանը, վերցնում է 2 հրացան եւ շատ փամփուշտներ: պահապան զինուորներից խլում է հրացանները, ջարդում է բանտի դուռը, արձակում է բոլոր բանտարկեալներին եւ վերցնելով իր մարդկանց ու բանտարկեալների ոտները կապող շղթան՝ հեռանում է առանց որ եւ է դիմադրութեան հանդիպելու: Ասում են, որ մի քանի պարսկահիներ, տեսնելով փողոցում աւազակներին, վախից սկսում են ձշալ, սակայն Մամադ Շարիֆ աղան հանգստացնում է նրանց ասելով.—«Բաջիք, ես ցերեկով եմ եկել, որ դուք չը վախենաք, ինչու էք ձշում, հանգստացե՛ք, մի՛ք վախենա՛յ»:

Միմիայն Սալմաստը չէ, որ ենթարկվում է քրդերի ասպատակութեան: Ասարպատականի բոլոր գաւառներից նրանց անհանգիստ շարժումների լուր է հասնում: Խոյում յարձակվում են Թօփիսանի վրա եւ քնում կառավարութեան 40 ձիււորներ: Յարձակվում են Ղօթի վրա եւ ջարդախանայի պատը ծակելով՝ տանում են ևս 60

հատ «վարանդի» հրացան: Ուրմիւռ, քաղաքի մօտ գտնված միսիօնարների որբանոցի վրա են յարձակվում, բայց չեն կարողանում վնասել: որբանոցի պահապան ծառաները ամբողջ գիշեր կուռում են հրացանաձգութեամբ ու հալածում: Նոյն աւազակ քրդերը հետեւեալ օրը Ուրմիւռի ճանապարհին թալանում են պարսից ևս 60 սարքաղների եւ խլում նրանց հրացանները: Սալմաստում համարեա գիւղ չէ մնացել, որ չենթարկվի կողոպուտի, թալանի եւ այդ բոլորը կատարվել է զարնան բացվելուց 1 1/2 ամսվայ ընթացքում: Կարծէք պատերազմական զրուծիւն լինի, գիւղերն են ամեն կողմից հրացանաձգութեան ձայներ են լսվում...
Սալմաստում այս տարի ցանքը շատ լաւ է եւ սպասածից աւելի առատ պտուղ է խոստանում, չորեքիւ յաճախ տեղացող անձրեւների:

Վ. ՄԷԼԻԶ-Բարախանեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Աւտորիական «Börsen und Handelsbericht» լրագիրը ապաշխարում է, թէ պատմութեան ամբողջ ընթացքում ոչ մի պատերազմ այնքան թանգ չէ նստել, որքան այժմեան անգլո-բոսնիական պատերազմը: Ամենահին ժամանակներից սկսած երբէք այնպիսի մեծ քանակութեամբ զօրք չէ ուղարկված այսքան հեռավոր տեղ, որպիսին ուղարկվեց հիմա հարաւային Աֆրիկա: Այս ամենի վրա պէտք է աւելացնել զօրքերի տեղափոխութեան չափազանց թանգ գինը եւ պատերազմական գործողութիւնների անապահաւարեցը, որ—ինչպէս հաւատացնում է լրագիրը—աւելի ընդարձակ է, քան Պրիւսիայից մինչեւ Ռուսաստանի սահմանները ձգվող արարածութիւնը: Միմիայն մեծ մասը, անշուշտ, կը բարդվի անգլիացի հարկատուների լայն թիկունքների վրա, բայց կը տուժեն նաեւ անգլիական գաղութականութիւնները, որոնք հարկատրված կը լինեն տուրք վճարել հանգրեւի չափադրութեան, հողի եւ սուրճի առեւտրի համար: Վերջինը այնքան էլ հեշտ չէ անգլիական կառավարութեան համար, որովհետեւ սուրբերի սահմանում Աֆրիկայում կախված է ինքնավար գաղութականութիւնների պարլամենտներից եւ ոչ Անգլիայից: Բացի դրանից թէ Անգլիայում եւ թէ եւրոպական ցամաքի վրա արդիւնագործութեան շատ ճիւղեր ծանր վնասներ կը կրեն պատերազմի վերջնալուց յետոյ: անապահաւարութիւնները, որ տալիս էր անգլիական կառավարութիւնը բազմաթիւ գործարանատէրերի, կը դադարեն եւ դեռ երկար ժամանակ պատերազմի անտեսական վնասը զգալի կը լինի անգլիական ժողովրդի համար:

—«Բէյտերի գործակալութիւնը» հաղորդում է, թէ Կ. Պօլսի ռուս լրագործ փերսոնը է բոսնիացի պահանջներ անել Բ. Դոնից այն փախուսական հայերի վերադարձի մասին, որոնք կանոնաւոր անցագրեր ունեն եւ որոնց անցագրերը օրինաւոր կարգով վաւերացված են Կոլկասի թիւրքական հրկապոսներից: Ռուսաց հրկապոսները բերանացի զինուորների է արել նոյնպէս հայերի զրուծեան վերաբերմամբ մի քանի սահմանակից նահանգներում Բ. Դոնը տեղեկացրեց ռուսաց լրագործին, թէ նա յայտնում է ընդհանուր միջոցների ծրագիր հայերի վերաբերմամբ, որոնք, ինչպէս նա ենթադրում է, կը գործայեն Ռուսաստանին: Մայիսի 8-ին, Ռուսաստանի կողմից Բ. Դոնը ներկայացրած մի յայտագրում յայտնված էր, որ եթէ Թիւրքիան չի դադարեցնի հալածանքները հայերի դէմ, այն ժամանակ Ռուսաստանը հարկադրված կը լինի միջամտել այդ գործում՝ ներկայ զրուծեանը վերջ դնելու համար:

—Միացեալ-Նահանգները բարձրագոյն դատարանը վճռեց 200,000 դոլար տալ ծովապետ Դէյվին եւ նրա ստորադրեալներին, իբրեւ պրեմիա, սպանիական նաւատորմը ոչնչացնելու համար Մանիլայի մօտ Մոնթաուէ Դէյ պահանջում էր 400,000 դոլար, պատճառաբանելով իր պահանջը նրանով, թէ սպանիական նաւատորմը աւելի ուժեղ էր ամերիկականից: Բայց բարձրագոյն դատարանը վճռեց, որ չը հաշվելով սպանիացիների ցամաքային թիւղածութիւնը, ամերիկական նաւատորմը, որ մասնակցում էր Մանիլայի մօտ տեղի ունեցած կռիւն, անկալի կամ, աւելի ուժեղ էր սպանիականից, ուստի եւ վճռեց տալ Դէյին միայն կէսը այն գումարի, որ նա պահանջում էր:

ՄԵՏԱԿԻ ՀԵՆԱՌԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 մայիս

ՍԵԻԱՍՏՈՊՈԼ: Երէկ Սեւաստօպոլ ժամանեց հելլենական թագուհին եւ այսօր ճանապարհ ընկաւ Պետերբուրգ:

ՀԵԼՍԻՆԿԻՅՈՐՍ: Ֆինլանդական մէյմի փակվելու ժամանակ լանդմարշալը եւ տալմաները ճառեր արտասանեցին, որոնց մէջ յայտնեցին դատաւարների հաւատարմի հպատակութեան զգացմունքները: ապա գեներալ-նահանգապետը կարգաւ Բարձրագոյն ճառը: «Ֆինն ժողովրդի ներկայացուցիչներ, ձեր այժմեան զբաղմունքները վերջացած են, ուստի եւ սէյմը փակված ենք յայտարարում: Յանձնելով ձեզ Բարձրեա-

լի հովանաւորութեանը, մնում ենք Մեր Կայսերական ողորմածութեամբ բարեհաճ դէպի բոլոր ֆինն աղբը»:

ԼՕՆԴՈՆ: Բօքսիտ գիւղացանում է, թէ եօմանրինների 13-րորդ բառալիւնը մայիսի 31-ին ստիպված էր Լինդլէյի մօտ անձնատուր լինել գերագանց թէոլ բօքսիտին: Մէտուէն նշանաւոր չարժեւն գործեց ազատելու համար իօմանրիններին, այնու ամենայնիւ ժամանակին վրա չը հասաւ: Մէտուէն յարձակվեց 2000 հոգուց բաղկացած բօքսական զօրաբաժնի վրա եւ յետ մղեց նրան:

Բօքսիտի գիւղացանը Պրետորիայից յունիսի 5-ին. «Մուլթն ընկերուց քիչ առաջ թշնամին դուրս մղվեց դիրքից: Համիլտօնի հեծեալ հետեւակները հաղթում էին նրան մինչեւ Պրետորիա: Թշնամին շատաւոր նահանջեց քաղաքի միջով: Եւ պարլամենտի ուղարկեցի եւ պահանջեց յանձնել Պրետորիան Բօտա առաջարկեց դադարեցնել թշնամական գործողութիւնները քաղաքը յանձնելու պայմանները որոշելու համար, բայց եւ հրամայեց հաղորդել նրան, թէ յանձնումը պէտք է լինի անպայման, հակառակ դէպքում անգլիացիները լուսաբացին քաղաքը կը մտնեն: Բօտա պատասխանեց, թէ նա վճռեց չը պաշտպանել քաղաքը, բայց հաւատացած է, որ կանայք, երեսանները եւ նրանց գոյքը վտանգի չեն ենթարկվի: Առաւօտեան ժամը 3-ին քաղաքադիւան երեք բարձրաստիճան ծառայողներ եկան Բօքսիտի մօտ եւ յայտնեցին, թէ կամենում են յանձնել քաղաքը: Կրեդէրի եւ Բօտայի ամուսինները մնացին քաղաքում:

Կ. ՊՈԼԻՍ: Միմիայնների վերջին ժողովում որոշվեց, հակառակ Բալկանեան պետութիւնների ներկայացուցիչների առաւելութիւններին, պնդել մաքսային սակագների գործադրութեան վրա: Բալկանեան պետութիւնների ներկայացուցիչները բողոքագիր ներկայացրին Բ. Դոնին:

ԼՕՆԴՈՆ: Բօքսիտ հաղորդում է Պրետորիայից, թէ քաղաքի գրաւումը անցաւ բաւարար: Կառավարչական շինութիւնների վրա այժմ ծածանվում է բրիտանական զօրաւոր:

ՏԵՆԵՏԻՆ: Երկաթուղային հաղորդակցութիւնը ընդհատված է, որովհետեւ կամուրջները խորտակված են: Տակուից եկան 13 անգլիացի ծովային զինուորներ, 50 ամերիկացիներ եւ 74 եւապօնացիներ:

25 մայիս

ԿԱՊԵՏԱՒԻՏ: 200 կամուրներ գնում են օգնելու Ուորթէնին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Պեկինի ամերիկական դեսպանը հեռագրում է, թէ զրուծիւնը վատացաւ: այդ պատճառով կառավարութիւնը հրամանագրեց ծովապետ Դէյլէյին ուղարկել Կեմպին Մանիլայից «Helena» զինուորական նաւը, որպէս զի Կեմպի ստանալ մի այնպիսի նաւ, որ կարողանար բարձրանալ Պէյթօս գետով մինչեւ Տեանցիին, որովհետեւ «Ենկօպի» զինուորական նաւը չէ գնում Տակուից հեռու: «Helena»-ի վրա են 166-րորդ ծովային զնդի օֆիցերները: կարծում են, որ ծովապետ Դէյլէյ կուղարկէ նրանց 2 բօտա ծովային զինուորներ: Գէյ լրագործութիւն տուեց Կօնլերին պահանջել Կեմպից օգնական զօրքեր եւ նրանցով, հարկաւոր վէպքում, պաշտպանել դեպքանատուներ, հրկապոսաւորներ եւ ամերիկացիների շահերը: Ամերիկական կառավարութիւնը վճռել է գործել անկախ, բայց եւ այնպէս պատրաստ է աջակցել միւս պետութիւններին կարգը եւ խաղաղութիւնը վերահաստատելու գործում:

ԲԵՐԼԻՆ: Պետական սէյմի Նաւերի թիւի վերաբերեալ յօդուածը ընդունված է անունական քուէարկութեան ժամանակ:

ՏՐՕՄՍԷ: Նօյնիօֆի բեւեռային էքսպէդիցիան մայիսի 23-ին ճանապարհ ընկաւ Սկօրբէյից դէպի Արլային կղզին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Մայիսի 25-ին, Թադուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրովնայի ծննդեան օրը, Յարսկօե-Սկօլում պալատական քահանայ Եանիչէվ պատարագ մատուցեց, որին ներկայ էին՝ Թադուհի Կայսրը, Մարիա Ֆէօդօրովնա եւ Ալէքսանդրա Ֆէօդօրովնա Թագուհի Կայսրուհիները, Թագաժառանգը եւ Մեծ Իշխանները եւ Իշխանուհիները:

Մայիսի 25-ին Պետերբուրգը զարդարվեց զօրաշինքով: բոլոր տաճարներում մաղթանքներ կատարվեցին: Երեկոյան լուսավառութիւն կար:

ՊԷԿԻՆ: Դրուծիւնը վատանում է: Օտար պետութիւնների դեսպանները յաճախ խորհրդակցում են: Անգլիական դեսպանը խնդրեց կրկին ուղարկել 75 ծովային զինուորներ: Հրա-

տարակվեց ուկազ, որի մէջ պահարարակութեան են կայսերական զօրքերը երկշտուրթեան համար. զօրքերի գլխաւոր հրամանատար իւշուրին եւ փոխարքայ Չմիլին յարձնարարվում է ճնշել «Մեծ բուռնցի» աղանդը:

ԵՅՈԿՆԱՄԱՍ Սէուրից ստացված տեղեկութիւններին նայելով՝ եւապոնական դեսպանի առաջարկութիւնները կորէական աստիճանաւորների դործադրած մարմնական տանջանքի վերաբերութեամբ՝ չափ փառ տղաւորութիւն թողին: Կորէական կառավարութիւնը հրաժարվում է միջնորդել, որ թագաւորն ընդունէ եւապոնական դեսպանին: Թագաւորը ուղղակի գիմեց եւապոնական կառավարութեան:

ՏԵՍՆԵՋԻՆԻ Լուրերին նայելով՝ իւշուրում ընդհանրապէս պատահեց «Մեծ բուռնցի» ապստամբական խմբերի եւ կաթողիկոսների մէջ, որի ժամանակ կաթողիկոսները սպանեցին 3 ապստամբներ եւ 9 հոգու էլ դերի վերցրին: Երկաթուղու գնացքը, որի մէջ կային զինուորներ եւ թնդանօթներ, վերադառնալիս կարողացաւ անցնել միայն երեք մղոն: Լանֆանից հետո, 41 մղոն տարածութեան վրա, երկաթուղային պահապանների բոլոր անակները եւ բոլոր գիւղերը, որոնք գտնվում են երկաթուղու գծի վրա, կրակի մէջ են: Հեռագրական սիւները սնչապարծ են: Չինական զօրքերը, որոնք գտնվում էին գնացքի մէջ, հրացան էին արձակում դաշակում: գտնվող տեղացիների վրա: Զօրքերը հրաժարվեցին դուրս գալ վազմաներից եւ ստիպեցին յետ դարձնել գնացքը: Անցեալ գիշեր եկան 290 ծովային զինուորներ զանազան պետութիւնների կողմից: Եկաւ անգլիական զինուորական «Բարփէյ» նաւը. չուտով դարձել է «Տէրերը»: Տիրում է այն կարծիքը, թէ զինուորական ոյժի աւելանալը ապահովեցրեց Տեանցիքը:

ԿԻՐԱԿՈՎ, Սկսվեցան մի շարք հանդէսներ համալսարանի գոյութեան 500-ամեակի առիթով:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՍՈՒՂԻ
(ժամերը Պետերբուրգի հաշուով
տարբերութիւնը 58 րոպէս)

№ 5 գնացքը:		№ 3 գնացքը:	
Բաղուից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 8 ժ. 53 ր.	կր. 5 ժ. 34 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 8 ժ. 53 ր.	կր. 5 ժ. 34 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 32 ր.	կր. 6 ժ. 34 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 32 ր.	կր. 6 ժ. 34 ր.
Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	առ. 7 ժ. 14 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	առ. 7 ժ. 14 ր.

№ 6 գնացքը:		№ 4 գնացքը:	
Բաղուից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 50 ր.	կր. 7 ժ. 59 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 50 ր.	կր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 7 ժ. 15 ր.	առ. 8 ժ. 42 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 7 ժ. 15 ր.	առ. 8 ժ. 42 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 7 ժ. 18 ր.	առ. 10 ժ. 05 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 7 ժ. 18 ր.	առ. 10 ժ. 05 ր.
Բաղուից դուրս է գալիս ցեր. 12 ժ. 10 ր.	առ. 5 ժ. 16 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 12 ժ. 10 ր.	առ. 5 ժ. 16 ր.

առաջ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 19 ր.	կր. 9 ժ. 41 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 19 ր.	կր. 9 ժ. 41 ր.
Բաղուից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 18 ր.	կր. 11 ժ. 18 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 18 ր.	կր. 11 ժ. 18 ր.
Բաղուից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 18 ր.	առ. 9 ժ. 30 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 18 ր.	առ. 9 ժ. 30 ր.

Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	կր. 7 ժ. 46 ր.	Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	կր. 7 ժ. 46 ր.
Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	կր. 12 ժ. 56 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	կր. 12 ժ. 56 ր.
Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	կր. 3 ժ. 29 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	կր. 3 ժ. 29 ր.
Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	կր. 8 ժ. 35 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	կր. 8 ժ. 35 ր.
Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	առ. 7 ժ. 15 ր.	Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր.	առ. 7 ժ. 15 ր.

Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. կր. 7 ժ. 46 ր. Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. կր. 12 ժ. 56 ր. Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. կր. 3 ժ. 29 ր. Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. կր. 8 ժ. 35 ր. Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. առ. 7 ժ. 15 ր.

Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. կր. 7 ժ. 46 ր. Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. կր. 12 ժ. 56 ր. Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. կր. 3 ժ. 29 ր. Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. կր. 8 ժ. 35 ր. Բաղուից դուրս է գալիս ցեր. 9 ժ. 1 ր. առ. 7 ժ. 15 ր.

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆԱԲԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նրա գիւրմատան մէջ 1900 թ. յունիսի 1-ին, ծառ 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Կախե-տինական եւ Լազարեական փողոցները խը-ճուկելու գործը 1000 քառ. սաճէն տարածու-թեամբ 2750 ր. գումարի: Աճուրդին մասնակ-ցել ցանկացողները կարող են տեսնել պայմա-նագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 3-ը:

Ի ԿՈՆՍՏԱՆՏՈՒՆԻ հայոց Վրաստանի եւ Իսթեթի նշանակեալ է ԱճՈՒՐ՝ առանց կրկի-նաճրդի 2 յունիսի վասն տալու ի վարձու գտուն մայր Աթոռոյ և Էջմիածնի, 9-րորդ քաղաքամասին Տփլիսոյ ի Սիւնեոնեան փողո-ցի. ցանկացողը կարեն գիմել ի կոնստանտինո-պոլսի նշանակեալ պահուն հանդերձ գրաւականօք:

Անդամ՝ Գրիգոր աւագ քն. Տէր-Բարսեղեանց 1-3

1900 թ.ի սեպտեմբերի 1-ին Թիֆլի-սի քաղաքային վարչութեանը հարկաւոր են ինչոք բնակարաններ տարրական դպրոցների համար 1, 4, 5, 7 եւ 10 քաղա-քամասերում: Իւրաքանչիւր բնակարան պէտք է բաղկացած լինի 7 յուսաւոր եւ բարձր սե-նականերից, որոնցից 3-ը մեծ՝ գասարանների համար, (երկարութեամբ մինչեւ 14 արշին, լայնութեամբ ոչ պակաս 7 արշինից) եւ 4-ը մի-ջակ մեծութեան սենականերից: Բնակարանը պէտք է ունենայ դաշկիթ եւ այլ անհրաժեշտ շինութիւններ: Այդ տեսակ բնակարաններ ու-նեցողին եւ վարձով տալ ցանկացողին խնդրում են գիմել քաղաքային վարչութեանը մինչեւ այս տարվայ յունիսի 1-ը:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑ ՆՈՐ ՄՏԵՈՂ
եւ վերաճնութիւն ունեցող աշակերտներին
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ
էժան գներով
ինչպէս վերոյիշեալ դպրոցի, նոյնպէս ծխական ուսումնարանների համար: Հարցնել՝ քարվան-սարայ Թամաշեկի, «Կալվազ» հիւրանոցի հանդէպ, եղ. Սուլեյմանբեկին: 1 3

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒՄ ԵՄ ԱՐՀԵՍՏԱՆՈՐԻ ԿԻՆ
Թողնելով 4 որը երկնայ մեռաւ. Դժբաղդ արհեստաւորի համար շատ դժուար է ամենից փողերին խնամելը, ուստի ցանկանում է առ-նրան մի բարի մարդու իրրեւ որդեգիր, որ-պէս զի ինքը կարողանայ աշխատել եւ միւս երեքին պահել: Երկնայ երկու տարեկան տղայ է: Հասցէ՝ Մուխրանսկի փողոց, Մերիլինի պե-րեուրի № 5, Ենօք Ասլանեանց:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆԱԲԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, թէ նրա գիւրմատան մէջ այս տարվայ մայիսի 26-ին, ժամը 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու 700 քառ. սաճ. գրանիտի քար մատակարարելը քաղաքային փողոցները առաջատակելու հա-մար: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 3-ը:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱՅԱԿԱՆ ԸՆԿԵ-ՐՈՒԹԻՒՆ

1900 թ.ին ըստ են տեսել.
Առակը Լաֆօնթէնի թղթով. Մ. Նու-պարեանի 357 մեծ. երես. 1 ր. — 4.
Խղճով դատաստան, թարգմ. 56 երես. — » 05 »
Հակակաւ նշանագրեր, հար-թակարի համար, 36 եր. — » 80 »
Մանկական լուստ, հայերէն, ուսուցիչ, վրացերէն եւ ֆը-րանսերէն լեզուով, ր. ապ. 1 — »
Սիֆիլիս, կապուղ շանկի եւ սուսանակի, բժ. վ. Արծր., 104 երես. — » 25 »
Լոյս է տեսել ընկերութեան 1899 թ.ի տե-ղեկագիրը. ցանկացողներին ուղարկում է ձրի:

Դիմել՝ Тифлисть, контора Общества Изда-ния Армянскихъ книгъ (Дорисмеликовская № 11) կամ Тифли (Russie) Societe de la publi- cation des livres armeniens. Հանդիմանում ան-դամ լինելու համար վճարում են տարեկան 6 րուբլի եւ ստանում 8 րուբլու գրքեր: Ըն-կերութեան գրասենական վաճառում են ըն-կերութեան գրքերը. ծանկացողներին ձրի ու-ղարկում է գրացուցակը: 5-5

ԲՈՐԺՈՄՈՒՄ

Վարձու է տրվում եւ ծախվում է Ե. Ս. Ա-րեւոյումիլի նախկին կահաւորված ամարանոցը, որ այժմ պատկանում է Թիֆլիս քաղաքին: Ամարանոցը բաղկացած է երկու յարկից. սոս-թին յարկում գտնվում են 5 սենեակ, ինձ վե-րին յարկում 4 սենեակ, խոհանոցներով եւ այլ կարեւոր շինութիւններով: Պայմանների մասին պէտք է հարցնել քաղաքային վարչու-թեան 4-րորդ բաժնում: 3-3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, մայիսի 28-ին, Թիֆլիսի ժողովա-րանը կը տեղափոխվի իր ամարային բնակա-րանը, որտեղ եւ կը լինի ցերեկվայ 3 ժամին ընդհանուր ճաշ կրթաշտութեամբ եւ սաղան-դարներով: Ամեն մի մասնակցող վճարելու է 1 րուբլի 20 կոպէկ: Մի եւ նոյն ժամանակ ա-ւագների խորհուրդը հրաւիրում է պ. պ. ան-գամներին եւ կանխդատներին ժողովարանի գրասենական տոմսակներ ստանալու իրանց ըն-տանիքների համար, որոնցով նրանք իրաւունք կունենան մուտք գործել ժողովարանի ամա-րային բնակարանը: 2-2

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆԱԲԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նրա գիւրմատան մէջ այս տարվայ մայիսի 26-ին, ցերեկվայ ժա-մը 12-ին, նշանակված է աճուրդ՝ կապալով տալու խաչնոցի շինութիւնը քաղաքային սպանանոցի մօտ, 7-րդ քաղաքամասում, նաւթուղու, 5,700 ր. գումարի: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, առաւօտեան ժամը 9-ից մինչեւ 3-ը:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ
"Մ Ի Ձ Ն Ո Ր Դ"
(Посредникъ)
Դ. Ի. ԵԱԿԻՄՈՎԻՉԻ

Պաշկինեան պատմ. Թամաշեկի քարվան-սարայի հանդէպ:
Կատարում է զանազան յանձնարարութիւն-ներ անշարժ կայքեր ծախելու եւ գրաւ դնելու: Պահանջվում է առաջին եւ երկրորդ գրաւակա-նով փող: Մանրամասնութիւններին համար խնդրե՛ք գիմել գրասենականը: № 3. 0-33

Շամախու քեւի ՄԷՅՍԱՐԻ հայարնակ գիւղի համար

Հարկաւոր է թեմական դպրոցի աւարտած, կամ թեմական դպրոցի կրթութիւն ստացած մի քանանայալու, որ ձեռնադրվուց յետոյ, բայց սովորական հասոյթներէր, կը ստանայ վի-ճակային կոնստանտինոպոլիսի տարեկան 300 րուբլի ուճիկ եւ գիւղի մէջ ձրի բնակարան: Ցանկա-յողները ժանրամասն պայմանների հետ ծանօթանալու համար, կարող են գիմել վիճակային կոնստանտինոպոլիս, ներկայացնելով մի եւ նոյն ժամանակ իրանց ուսման, հարկից եւ գիւրմատ-կան ծառայութիւնից ազատման վկայականները:

1-3 Անդամ Կոնստանտինոպոլի՝ Տաճառ քանանայ Մարգարեան

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET Cie
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւաւնացութիւն ՄԱՐՍԷԼԻՅ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու չարաթը մի անգամ:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսուն եւ Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 7/20 յունիսի ՄԻՆԴԷԼԻ չորեքշաբթի, հաւապետ ՇԻՆԷ: Եւ այս-պէս շարունակաբար, երկու չարաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտալեպէի մէջ, ընդու-նելով սպրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Բաթումից եւ Տաւրապոլիսից մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-մար թող բարեհաճեն գիմել ընկերութեան գործակաւորներին:

ԲԱԹՈՒՄԻՄ—պ. վիկտոր դ'Արնօն, Եւրէլէժնայա ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարե-կենդանեանին, Սիմօն փող. խօշտարութեամբ եւ Մայսա-րաճէի քարվանսարաւ: ԲԱԹՈՒՄ—կըր. վ. եւ ի. Մուրաֆեաններին, Եւրէլէժնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՍ-ՍիՅՈՎ—վաղիկաւազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Տ. չ.) 6-20

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒ-ԹԻՒՆԸ

հրաւիրում է այն անձանց, որոնք ցանկանում են վերցնել կապալով, երեք տարով, Խուդա-դեանի նախկին քարվանսարան, որ գտնվում է Արմենակի քաղաքում՝ ներկայանալ յունիսի 13-ին, երեկոյան ժամի 8-ին, վարչութեան գրասենականը: Ընդունվում են եւ կրթված ծրար-ները: Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ամեն օր, առաւօտեան 11-ից մինչեւ ժամի 1-ը վարչութեան գրասենականում, Արմենակի քաղաք, տուն Կրեկոպոլսի ընկերութեան: 3-5

Լ. ՆԱՆ-ԱՂԵԱՆՅԻ
առաւելագործ գիւղեր-ցերեկ ԻՆՔԵ ԻՐԱՆ չոր է բարձրացնում յաճր տեղերի վերին:
Դիմել՝ А. Ханъ-Агову, Тифлисть, Великокняжеская ул., 37.
Գիւղատնտեսական մեքենաներ 250 նկարով. վաճառականների մօտ 50 կոպէկ: 11-30

Թիֆլիսի Նաւարդիւնարական Ընկերութեան
Վարչութիւնը

յայտնում է ի գիտութիւն պ. պ. բաժնետէրերի, որ վարչութիւնից անկախ պատճառներով, սոյն մայիսի 24-ին նշանակված

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ,
յետաճգվում է մայիսի 28-ին, կիրակի օր, առաւօտեան 10 ժամին, քաղաքային տան դահլի-ճում:
(23 եւ 27 մ) 2-2

ՅԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՑԵՆԻԿԱԿԱՆ ԲՈՐՈ
Իսմեէր Ն. Բ. Պասսեկի
Тифлисть, Михайловская ул. № 116.
Հառցին հեռագրիչների համար. Тифлисть—
Пассеку.
ՏԵԼԵՖՈՆ № 642.
ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ
ԵՍԿԱՑՈՒՄԸ
ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ ԵՍԿԱԿԵԼ
ա մ ը ն տ ե ս ա կ
տիւրբիւններ, խողովակներ, մեքենա-
ներ եւ ջրհաններ:
Կ Ա Ռ Ո Ւ Ց Ա Ն Ե Լ
Ե Ր Կ ա թ է Կ ա մ ու ը ջ ն ե Ր
եւ տեսակներ:
ՑԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՐՈՒՄՆ
(Ե. Տ. չ.)